ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/306

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.11.2021թ. թիվ 26/26-1/18528-2021 գրությամբ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 05.11.2021թ. թիվ 1/5093-2021 գրության հիման վրա, 12.11.2021թ. թիվ 26/26-1/18528-2021 գրությամբ նախաձեռնել է «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/306 ընթացակարգի շրջանակներում 17.11.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.11.2021թ. թիվ 1/5093-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Կից ներկայացնում ենք ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/11 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին դիմում-հայտարարությամբ մասնակցելու ցանկություն հայտնած «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղի հայտի մերժման վերաբերյալ հիմնավորումը՝ կից հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/306 ընթացակարգի շրջանակներում 17.11.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/306 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/306 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու

նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Դանինի» ՍՊԸ Հայաստանի մասնաճյուղի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-հաշվի առնելով, որ մասնակիցը համարվում է ոչ ռեզիդենտ, ուստի փաստաթղթերը ներկայացվում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով /ներառյալ իրական շահառուների մասին հայտարարագիրը Հավելված 1.2, Հավելված 1.3/ համաձայն սույն ընթացակարգի հրավերի 8.19 կետի,

-առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի «արտադրողի անվանումը» սյունակում հստակ նշված չէ առաջարկվող ապրանքի արտադրողի /արտադրողների/ անվանումը և կազմակերպաիրավական ձևը,

-առաջարկվող ապրանքի «տեխնիկական բնութագիր» սյունակում ապրանքի բնութագիրը հստակ չէ՝ մասնավորապես լուսատվության չափը, երաշխիքային ժամկետը և ապրանքի չօգտագործված /նոր/ լինելու հանգամանքը,

-իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.2 հավելվածի 1.3.2, 4.3.2, 4.3.3 կետերը ենթակա են շտկման,

-իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.2 հավելվածի 4.4 բաժինը չի լրացվում, համաձայն հայտարարգրի լրացման կարգի, քանի որ անձի հաշվառման հասցեն և բնակության հասցեն նույնն են,

-իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.2 հավելվածի 4.5/ա/, 4.5.1, 4.7.1 և 4.7.2 կետերը լրացված չեն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը, շտկված դիմում հայտարարությունը ներկայացվել է որպես ՀՀ ռեզիդենտ

հանդիսացող անձ, սակայն չի հաստատվել էլեկտրոնային ստորագրությամբ և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.11.2021թ. թիվ 26/26-1/18528-2021 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 05.11.2021թ. թիվ 1/5093-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***<u>Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:</u>***

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպես, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Դանինի» ՍՊԸ Հայաստանի մասնաճյուղի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-հաշվի առնելով, որ մասնակիցը համարվում է ոչ ռեզիդենտ, ուստի փաստաթղթերը ներկայացվում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակով /ներառյալ իրական շահառուների մասին հայտարարագիրը Հավելված 1.2, Հավելված 1.3/ համաձայն սույն ընթացակարգի հրավերի 8.19 կետի,

-առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի «արտադրողի անվանումը» սյունակում հստակ նշված չէ առաջարկվող ապրանքի արտադրողի /արտադրողների/ անվանումը և կազմակերպաիրավական ձևը,

-առաջարկվող ապրանքի «տեխնիկական բնութագիր» սյունակում ապրանքի բնութագիրը հստակ չէ՝ մասնավորապես լուսատվության չափը, երաշխիքային ժամկետը և ապրանքի չօգտագործված /նոր/ լինելու հանգամանքը,

-իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.2 հավելվածի 1.3.2, 4.3.2, 4.3.3 կետերը ենթակա են շտկման,

-իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.2 հավելվածի 4.4 բաժինը չի լրացվում, համաձայն հայտարարգրի լրացման կարգի, քանի որ անձի հաշվառման հասցեն և բնակության հասցեն նույնն են,

-իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.2 հավելվածի 4.5/ա/, 4.5.1, 4.7.1 և 4.7.2 կետերը լրացված չեն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը, շտկված դիմում հայտարարությունը ներկայացվել է որպես ՀՀ ռեզիդենտ հանդիսացող անձ, սակայն չի հաստատվել էլեկտրոնային ստորագրությամբ և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն որպես շտկում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կրկին արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ շտկված դիմում հայտարարությունը չի հաստատվել էլեկտրոնային ստորագրությամբ, այսինքն՝ Ընկերությունը «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.11.2021թ. թիվ 26/26-1/18528-2021 գրությամբ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**